

ԲԱՆԱՍՏԵՂՇԱԿԱՆ

ԵՍ ՄԵՍԻԱՆ ԵՄ ԱՅՍ ԳԻՇԵՐ...

Բ.

Ես Մեսիան եմ այս գիշեր. (*)

Լընի ավին՝

Այնքան անոյե յուեֆերով լի,

Ալիքներովն իր զանգրուած

Հովի բերնին:

Ամայութիւն է իմ չորս պին.

Ոչ ձրկնորսներ, ոչ ունկընդիր,

Ոչ իսկ բեկեալ քեր ներմակ կըսաներուն,

Որոնց շուրթն խօսեր եմ ես

Խոր ցաւերէն մարդոց սրտին,

Ու ըրեր զովն իմ երկնին:

Եկած, իջած արդ աներազ այս ավաւնին,

Ուր կը դողար երբեմն այգին,

Հստիկներով ուկոյզներու:

Նըստեր լեռներն են շուրջ բոլոր

Աւազանին չինջ ջուրերուն,

Առանց գիւղի ու ֆաղափ.

Սուգը նոյն է սա ֆաւերուն ու աւազին

Դեղին դեղին,

Դէպ հորիզոն քեւ արձակող:

Նոյն է ողբը ալիքներուն,

Խորը որոնց՝ պարզ մարդերու

Կը թըրթըռայ կառօք սուրբ,

Կը բըռնկի, կ'ըլլայ կըսկիծ մը բաբախուն՝

Աննուն սրտին մէջ աշխարհին,

Որոնց վըրայ սըլաֆն ոսկի մարդոց իղծին

Կը ծածանի,

Յաւիտեանէ մինչ յաւիտեան:

Հեռուն, հեռուն

Երանութեան լեռն ոտին,

Թեւեր սեւ վըրաններուն

Մըխըրմըրած ինչպէս մագիլ

Բլրակներու խարտաւ կողին:

(*) Հոս կը դնեմ մօտ օրէն լոյս տեսնող «Խորակման Գիշերներ» եղիվարդի հասարի «Ես Մեսիան եմ այս գիշեր» բազմիջեայ բերուածէն մաս մը:

Ես Մեսիան եմ այս գիշեր
 Լեռան վրայ երանութեան .
 Բայց չեն բացուիր իմ շրթունքներ
 Խոստումով լի
 Կամարակապ կայաններուն :

Հիմա սէր են բոլոր անոնք
 Որոնք կերան իւրն այրիին
 Ու խրմեցին ֆրսինքն աղի՝
 Արցունքներու մէջ աչք բացած
 Որբուկներուն :

Հիմա սէր են բոլոր անոնք
 Որ խրմեցին արիւնն արդար
 Ու պղծեցին անպղծելին :

Բայց աղֆաք, հեզն ու անհէր,
 Աչքին՝ չոր փար, ու սրբին՝ վէրք,
 Բոկն, անօթին,
 Զը քափեցին բեռն ու վասակ
 Իրենց ուսէն
 Գերեզմանին իրենց մոսֆին,
 Արեւին սակն այս աշխարհի:
 Որոնց սրբին չըծրաւ յոյս,
 Որոնց զըլխուն չիջաւ գիշեր
 Առանց անի:

Ա՛լ չեն բացուիր իմ շրթունքներ
 Կընթինքն սակ
 Այս անըստի քրեուառութեան:

Լեռն է հիմա լեռ անէծփի,
 Քրդամիքովն իր առագէ,
 Խըղմբսանփի սըլաֆ մ'ինչպէս,
 Եւ կարկառուող դէպի երկինք,
 Ուրկէ դարեր՝ դարեր առաջ
 Ես բաշխեցի սափոր սափոր
 Երանութեան ամբոխներուն,
 Այրած անոնց հոգիներուն,
 Զերթ մանանայ շաղ սընունդի:

Լեռն է հիմա լեռ անէծփի,
 Հսպասելով նոր Աստուծոյն:

ԵՂԻՎԱՐԳ